№ 79 Մայիսի 5 (17) 1881 Մայիսի 5 (17) № 79

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ. կէս տարվանը 6 բուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)։

Հայտարարութիւնն ընդունվում է ամեն տեղից։

Հայտարարությունների համար վճարում են
խմբագրիչի յոտին 2 կոպէկ։

Տպագրվում է հինգշաբթի եւ կիրակի օրերում։

Խմբագիր-հրատարակիչ Գ. Ա. Ալանեան։

Տպագրվում է Թիֆլիսի Գրաքննիչ կոմիտէի օրհնութեամբ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան օրգան։—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Հորիզոնտ» լրագրի թղթակցութիւն։ Արտաքին լուրեր։—ԹԱՆԿ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳՐԻՐԵՐ։—ՅԱՒԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱԿԱՐԱԿԱՆ։ Դասի թեկ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՕՐԳԱՆ

—

Ընթերցողը յիշում է որ մենք շատ անգամ այն միտքն ենք յայտնել թէ Հարկաւոր է ռուս մայրաքաղաքներից մինում հիմնել առանձին լեզուով մի լրագիր, թէ կուզ շարաֆանների, որի մէջ մենք, կովկասցիներս, առանց ցեղի և կրօնի խտրութեան, կարողանայինք պաշտպանել մեր երկրի բարգաման, տնտեսական և հասարակական շահերը։ Կեանքը քանի գնում է, նրա կենական, առօրեայ պահանջները բազմանում են և աւելի ու աւելի զգալի է լինում մեզ համար այդ տեսակ թերթի անհրաժեշտ պահանջը։

Ինչպէս ասեմ տեղ, ասում ենք, մեր երկրի պայմանները աւելի և աւելի բազմազեղ են դառնում հասարակական կեանքի զարգացման հետ միասին, բայց գաւառական մամուլի գրութիւնը բացառապէս մեզ անհասկանալի է զրել այսպէս այն, ինչ որ կարող էին գրել Ս. Պետերբուրգի կամ Մոսկվայի մի լրագրում, որ հրատարակվում է առանց ցենզուրայի։

Բայց դրա համար մենք կոմպետենտներս, չը կարողանալով մեր երկրում մի օրգան ունենալ, որ կատարելապէս արտայտէր մեր առօրեայ պահանջները, պէտք է մայրաքաղաքներից միում ունենայինք մի սեփական օրգան, որ մասնաւորապէս պարապէր կովկասեան կեանքով, որովհետև, ինչպէս մենք համոզվեցինք մեր դառն փորձից, անդադար թղթակցով մայրաքաղաքների թերթերին, ռուս ազատամիտ թերթերը զուցէ բեռնաւորված լինելով նիւթերով, շատ քիչ ուշադրութիւն են դարձնում մեր հեռաւոր երկրի վրա, շատ անգամ տեղ են տալիս կովկասեան թղթակցութիւններին, կարծես ակամայ կերպով զեղեցուում են ժամանակ առ ժամանակ մեր թղթակցութիւնները մեր հասարակական կեանքի ամենայայտնի խնդիրների վրա։

Մամուլը այն հասարակական նշանակութիւնն ունի, որ կարող է նախաձեռնել այս կամ այն ելոյթը և այդպիսով թէ հասարակութիւնը և թէ կառավարութիւնը մեծ օգուտ բերել։ Բայց մեզ թողել է տրված գրել երևոյթների հետևանքների վրա միայն, իսկ բազմաթիւ թղթակցութիւնները, որոնք կարող էին բացատրել պատրաստվող անցքերը, մնում են մեր պորտֆէլների մէջ և տպագրվում կերպով կարչում են։ Մենք կարող ենք օրինակի համար տալ մի թղթակցութիւն այն ջարդի մասին, որ քրիստոնեաները տուին Թուրքերին Բագաքաղաքում, երբ որ ցանալի իրողութիւնը արդէն կատարված է, բայց նախքանից ելոյթները և անբարեհաճութիւնները բացատրող թղթակցութիւնները մնում են անգործադրելի։ Մեր խմբագրական սեղանի մէջ։ Առաջնոյ յայտնել որ ժողովրդի մէջ գոգտնութիւն կայ Բագաքի ոստիկանների դէմ,—անհարկի է. այն ինչ զրանով զուցէ ստաջ կառնվէր տեղի անցքեր։ Բայց յայտնել իրողութիւնը որ ժողովրդը քարեր արձակից ոստիկանների վրա, կանչելով որ չէ կամենում ունենալ թուրք պաշտօնեաներ ոստիկան մէջ,—այդ կարելի է, երբ տեղի անցքը արդէն կատարված է և ուրեմն նրա առաջն առնել անհնարին է։

Այսպիսով լրագրութիւնը չէ հասնում իր նպատակին։

Մենք մեզ մեծ չենք կարող զրել, իսկ մայրաքաղաքի ռուս ազատամիտ մամուլը արհամարհանքով է վերաբերվում դէպի հեռաւոր երկրի կենական շահերը։ Մնում է մեզ ուրեմն, ցանկանալ որ մայրաքաղաքներից մինում հարուստ հայերը հիմնեն մի փոքրիկ, թէ կուզ շաբաթական օրգան, որ մայրաքաղաքի կովկասեան բնակիչներին առաջնորդելեմամբ և մեր աշխատանքներին կարող էր արտայայտիչ դառնալ մեր օրական պէտքերին։

Այդ անհրաժեշտ հարկաւոր է, մինչև որ գաւառական մամուլը ազատված կը լինի դէնդ ցենզուրայից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Տեղական լրագիրները հաղորդում են որ մայիսի 2-ին Նարին կայսերական Բարձրութիւն Կովկասեան փոխարքան թողեց Ս. Պետերբուրգ, ուղղորդվելով դէպի Թիֆլիս։ Այսպեղ նա կը յանձնի փոխարքայութեան գործերը և մի քանի շաբաթից յետոյ կրկին կուզեղորմի Ս. Պետերբուրգ և այնուհետև իր ընտանիքով ճանապարհ կընկնի դէպի Լեռ և Կարսաստ։

—

Յոգուտ սրբազնոցի որ հիմնվում է Թիֆլիսում հանդուցեալ Կայսրի անունով, մեր խմբագրութեան մէջ հաւաքած 350 բուբլ գումարը մենք արդէն յանձնեցինք փոխարքայի օգնականի կը-

---

ԴԱՆԻԷԼ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ Վ. Է Պ

(1722—1728)

—

Է.

Տաճեի վանքը թէ իր չենուածքների ընդարձակութեամբ և թէ իր ամրութիւնների անհնարաբերութեամբ ունէր բերդի տեղ ծառայելու։ Այս պատճառով Դանիէլ բէկը ընտրեց նրան որպէս կենտրոն իր գործունէութիւնների։

Կար և մի ուրիշ բան, այդ վանքը, որպէս Սիւնեաց ալեաների հոգեոր կառավարութեան մայր աթոռը, ունէր անարգել հարաբերութիւն Ալանի միաբանութիւնը իր հարստութիւնը դրեց բէկի տրամադրութեան ներքոյ, իրաւունք տալով նրան, գործ ածել իր պատերազմական ծախքերի համար, որպէս կը բարեհաճի։ Աւելի քան ութ հարիւր տարի գոյութիւն ունեցող այդ վանքը, դարերի ընթացքում, գիրքեր էր արծաթի, ոսկու, թանգագին քարերի մեծ քանակութիւնը։ Ամեն մի թագաւոր, ամեն մի թագուհի, ամեն մի իշխան և իշխանուհի, իր հոգու փրկութեան համար, նուիրել էր վանքին՝ որը գիրք, որը ագարակ, որը ընդարձակ անտառներ, որը թանգագին անօթներ, խաչեր և այլնս։ Ցանկացած ժամանակներում պատահած լաւիշակութիւնները, ասարատուութիւնները չէին կարողացել բոլորովին պատռել այդ անգին հարստութիւնը։ Վանքի գաղանի պահարանները խիստ ապահով տեղեր էին ասպատակների ձեռքից նրանց պահպանելու։ Համար։

Վանքատոր կացարանը բաղկացած էր մի քանի անենկիներից, որոնց դռները բացվում էին միմեանց մէջ։ Դրանցից մէկը, որ ետեի կողմումն էր, ունէր մի նեղ լուսամուտ միայն առատապէս մտ և ալիքան մուտ էր, որ ներքևով ու պէտք էր ծռպ վառել մի բան տեսնելու համար։ Այստեղ միայնակ նստած էր մի ծերունի աբեղայ և նրա առջև դրած էր մի շարժական քուրսի, որ ասպական ոսկերիչների հալոցի հիշատ նմանութիւնը ունէր։ Նա մի ձեռքով փչում էր փուռը, իսկ մյուսով, որով բռնած ունէր փոքրիկ ուներ, անդադար շարժում էր ածուխները, որ աւելի չիկանան, որ աւելի բոցավառվեն։ Ածուխների մէջ ածվելով էր մի մեծ բութեակ, *) որի մէջ հալվում էր մետաղ։ Դեղուռնի աբեղան գեռ իր զործողութիւնը չէր վերջացրել, երբ ներս մտաւ վանահայրը Ներսէս սրբազանը։

—Տեսնում էք, վանահայր սուրբ, ասաց նա ծիծաղելով, — ձեր ոսկերչութիւնը վերջապէս պէտք եկաւ մեզ։

Վանահայր սուրբը միայն բարեսրտութեամբ ժպտաց և չարունակեց փուռը փչել։ Նա իր պատանեկութեան հասակում, իրաւ, ոսկերիչ էր շատերտ էր, վարպետից փախչելով, եկաւ վանքը և արեցաց դարձաւ։

—Այդ ինչ էք հարում, հարցրեց սրբազանը, նայելով քուրսի մէջ։

—Սուրբ սքանչելագործէ՝ աջը, պատասխանեց աբեղան, և նկատելով, որ մետաղը բոլորովին հալված էր, բութեակը ունէցիով զուրս հանեց քուրսի մէջից և հեղուկ զարձած արծաթը թեռնաքով ածեց մի կաղապարի մէջ, ուր սառչելով, երկայն չերտի ձև ստացաւ։ Ինաչ կաղապարի մէջից զուրս հանեց չերտը, դրեց միւսների մեջ, որ դեղված էին մեանակց վրա։

Վանահայրը սկսեց հաշարել արծաթի չերտերը։ Երբ վերջացրեց, նա դարձաւ դէպի ծերունի աբեղան, հարցնելով.

—Երևում է, գեռ բոլորը չէք վերջացրել, Վանահայր սուրբ։—Շատ է մնացել։

Այս սպասելով Վանահայր սուրբի պատասխանին, որն ինքն էլ չը գիտէր, թէ որքան է մնացել,—վանահայրը մտեցաւ մի անգին արկղի, որ լիքված էր ոսկուց ու գեղեցիկ գեղեցիկ գանձերով։ Դրա մէջ լցրած էին գանձագի արծաթեայ անօթներ, խաչեր, բուրվառներ, աշտանակներ և այլ եկեղեցական սպասներ։

Վանահայրը մեր առաջ մի գեղեցիկ սկիհ, բանկոց հանեց։ Սկիհի պատանդանի վրա բառական հարարարեմամբ քանդակված էր նուէրիցի անունը։ Վանահայրը կարդալով այդ, ասաց.

—Մեր վեց հարիւր տարվայ հնութիւն է, հարյոց Լեան թագաւորից ընծայված։ Երբ Սիւնեաց Հայրապետը եպիսկոպոսը գնաց Երուսաղէմ, Կիլիկիայով անցաւ. այնտեղ տեսնվեցաւ Լեանի հետ թագաւորը նուէրից մեր վանքին այդ սկիհը ուրիշ շատ անօթների հետ։ Այնտեղից մեր միաբանութիւնը սահմանից անհն տարի գաղանի միաբարթի որ պատարագի ժամանակ լիչեն բարեպաշտ թագաւորի միջատակը։

—Մեր կը հարուստանենք դարձեալ յիշել, ասաց վանահայր սուրբը,—բայց սկիհը կը հանենք այդ քուրսի մէջ, որովհետև այժմ նա ուրիշ բանի պէտք է։ Վերջին խօսքերի հետ նա առաց սկիհը, և դնելով սեղանի վրա, մուրճով ջարդեց, յետոյ ձգեց բութեակի մէջ։

Վանահայրը մեր առաջ մի անգին արծաթի կնիք (լաքան), որի մէջ սանդալարի խորշերը կատարելու ժամանակ լուանում էին մաքառների ոտները։

—Այդ կնիքը Սիւնեաց փիլիպպէ գանելեց իշխանի նուէրներն է, ասաց վանահայրը։—Նա ընծայեց մեր վանքին անգին կոպ ու կալուածներ։ Տաճեն գիւղը. Արծիկ գիւղը. Բերդկանդի գիւղը նրա հարիւրական կալուածներն էին, բոլորը առաց մեր վանքին։ Նա չունեց մեր վանքի մտ և սուրբ Լուսաւորիչ անունով նկեղեցին։ Այն ժամանակվայ վանահայր Գասիթ եպիսկոպոսը պարտաւորացրեց վանքի մաքառներին, որ անին տարի իշխանի հոգու փրկութեան համար քառասուն օր պատարագ մատուցանեն և վաթսուն օր «Տէր ողորմա» ասեն։

—Մենք պատուհան եղեանասուն օր «Տէր ողորմա» կասենք իշխանի հոգու փրկութեան համար, պատանեանց ծերունի աբեղան,—այս. ասենցներս, նրա նուէրիսն կոնքը պէտք է մնանի իմ քուրսի մէջ։

Այնուհետև վանահայրը վերուաց մի փոքրիկ արծաթէ արկղիկ, զարդարած գեղեցիկ քանդակներով և ասելիքով։ Դրա մէջ պահված էր սուրբ Աստուածածնի գիսակների մի մասը։

—Այդ արկղիկը, ասաց նա, ընծայել է ազատանից Գրիգոր-Տիգրան անունով գանձերի իշխանի դուստրը՝ Շահանդուխտ օրիորդը։ Երբ հակառակորդ իշխանները նրան հարանեանի էին տանում Բաղաշ երկիրը, *) և երբ հասան Ցամբեի հանդեպ, այդ մի՝ միջոցին վրա հասան մի գունդ ազատագրվված պարսիկներ։ Նրանք կամենում էին առնանդել չքնաղագեղ օրիորդին և իրանց թագաւորի համար տանել։ Օրիորդը անօրէնների ձեռքը չընկնելու համար, երեսը խաչակնքեց, մոգակեց իր ձին, և անագին բարձրութիւնից գահավէժ եղաւ խորին անդունդի մէջ։ Աստուծոյ հրեշտակները նրան օգնութեան հասան, և կարծես կամքի պէս նստած, անվնաս իջաւ. անգնդի յատակի վրա։ Նոյն տեղում բարեպաշտ օրիորդը չինեց մատուռ և այնուհետև իր անձը նուիրեց Տէրունական։ Վերջին այդ մատուռը կոչանից գարձաւ։ Դա իր հարատևեան կէսը բաժանեց կարօտեալներին, իսկ մնացածը նուիրեց մեր վանքին։ Շնորհի սահմաներից սկսած մինչև Գիլանան գեղը, մեր ունեցած կալուածքները բոլորը նրա ընծայածն է։ Իսկ այդ գեղեցիկ արկղիկի մէջ պահում էր նա իր Տարենակութեան գոհարեղէնները։ Նա այդ գոհարեղէնները վաճառեց, արծաթը քարանեց արկղանոցներին, իսկ արկղիկը նուիրեց մեր վանքին, որ դրա մէջ պահվի սուրբ Աստուածածնի գիսակները։

—Աստուած հոգին լուսաւորեսցէ, պատասխանեց ծերունի աբեղան.—Մենք այստեղում սուրբ Աստուածածնի գիսակները մի հատարակ սուտվի մէջ կը պահենք. այդ մասին ես հաւատացած եմ, որ սուրբ Աստուածածինը չի բարկանայ։

—Ես էլ կարծում եմ, որ չի բարկանայ, պատասխանեց սրբազանը և մեր առաջ արկղի միջից մի արծաթէ բուքվառ։

—Այս բուրվառը, ասաց նա,—Սիւնեաց տիկին Շուշանի նուէրն է։ Նա Աշտ իշխանի ամուսնին էր։ Դրա ժամանակում Վայոց Ձորի լեռների մէջ գրված էին մի կարգ կրօնաւորներ, որոնց Հասատամարմարներ **) էին կոչում։ Իբրաւ, այդ ճգնաւորները ոչ հաց, ոչ միս և ոչ էլ այն բոլոր ուտեստները, որ գոյութ են անում մարդիկ, չէին ուտում կերակրվում էին

*) Բաղաշ երկիրը այժմեան Ղարս-քաղաքն է։

**) Խոտամարակ նշ. խոտով կերակրվող։

---

*) Բութեակ կամ բութեա նշ. հալոց։